Կարգապահական գործ թիվ 19077

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2019 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 220-րդ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/137-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԳԱՅԱՆԵ ԼՅՈՒԴՎԻԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Սիմոն Բաբայանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Հրանտ Անանյանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի և Կարեն Մեժլումյանի,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Գայանե Լյուդվիկյանի (արտոնագիր՝ 1582) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

01.04.2019թ. Պալատ է մուտքագրվել Հարություն Հովհաննիսյանի (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմումը, որում հայտնվել է, որ Դիմողը 16.09.2014թ. իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքել փաստաբան Գայանե Լյուդվիկյանի հետ: Վերջինս խոստացել է, որ դատարանի միջոցով կճանաչի Դիմողի սեփականության իրավունքը Երևան քաղաքի Վարդանանց փողոցի 5ա շենքի թիվ 354 բնակարանի նկատմամբ, որի սեփականաշնորհման գործընթացից Դիմողը դուրս է մնացել իր քրոջ՝ Քալի Վարդանյանի ապօրինի գործողությունների հետևանքով: Իր ծառայությունների համար փաստաբան Գայանե Լյուդվիկյանը Դիմողից պահանջել և երկու մասով ստացել է 1, 200,000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:

Քանի որ Դիմողը բնակվում և աշխատում էր ՌԴ-ի Տյումենի մարզում, նա Գայանե Լյուդվիկյանին է փոխանցել իր անձնական և հեռախոսային տվյալները, որպեսզի վերջինս պարբերաբար Դիմողին տեղյակ պահի գործի ընթացքի և ելքի մասին, ինչն անելու խոստում փաստաբանը Դիմողին տվել էր:

Գումարի մի մասը ստանալուց հետո Գայանե Լյուդվիկյանը մի քանի անգամ զանգահարել է Դիմողին և պահանջել է վճարել նաև գումարի մնացյալ մասը, հայտնել է, որ հայցադիմում է ներկայացրել դատարան: Գումարն ամբողջությամբ ստանալուց հետո փաստաբանը Դիմողին այլևս չի զանգահարել իր բջջային հեռախոսահամարին, Դիմողի մոտ 70 զանգերին չի պատասխանել, իսկ նրա բնակարան կատարած Դիմողի մոտ 30 զանգերին փաստաբանի դուստրը պատասխանել է, որ Գայանե Լյուդվիկյանը տանը չէ:

Դիմողն առողջական խնդիրների պատճառներով երեք տարի ՀՀ-ում չէր եղել, Գայանե Լյուդվիկյանի հետ չէր հանդիպել և գործի ելքից տեղյակ չէր: 25.12.2018թ. Դիմողը հանդիպել է Գայանե Լյուդվիկյանի հետ, ով գործի վերաբերյալ Դիմողի հարցերին հրաժարվել է պատասխանել և պահանջել է իրեն կրկնակի վճարել Դիմողի գործերով զբաղվելու համար:

Դիմողը դիմել է այլ իրավաբանների, ովքեր ուսումնասիրել են Դիմողի խնդիրը և տեղեկացրել, որ դեռևս 13.09.2016թ. Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի ԵԿԴ/2591/02/15 վճռով Գայանե Լյուդվիկյանի ներկայացրած հայցադիմումը մերժվել է, չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:

Դիմողը դժվարությամբ նորից հանդիպել է Գայանե Լյուդվիկյանի հետ և բացատրություն է պահանջել փաստաբանի գործողությունների վերաբերյալ: Փաստաբանն անհիմն արդարացել է, որ ցանկացել է Դիմողին տեղեկացնել, սակայն դա անել չի կարողացել:

Դիմողի և փաստաբան Գայանե Լյուդվիկյանի միջև կնքված իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիրը 17.12.2018թ. ստորագրված հանձնման-ընդունման ակտով լուծվել է:

Դիմողը պնդում է, որ փաստաբան Գայանե Լյուդվիկյանն իրեն հայտնել է իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ, իրեն չի տեղեկացրել գործի ընթացքի և ելքի մասին, խոստացել է մինչև 02.03.2019թ. վերադարձնել 400,000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամը, սակայն իր խոստումը չի կատարել և Դիմողին խոստացել է, որ առանց որևէ կասկածի՝ նրա օգտին ձեռք կբերի դատական ակտ և ճանաչել կտա Դիմողի իրավունքները վիճելի բնակարանի նկատմամբ: Դիմողը նաև պնդում է, որ փաստաբանը սխալ հայց է ներկայացրել, քանի որ պետք է դիմեր ոչ թե ընդհանուր իրավասության դատարան, այլ՝ վարչական դատարան:

Դիմողը խնդրել է փաստաբան Գայանե Լյուդվիկյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ և խստագույնս պատժել նրան:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 02.05.2019թ. թիվ 164-Ա/ԿԳ-19077 որոշմամբ փաստաբան Գայանե Լյուդվիկյանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագրիք)** 2.7.2, 3.1.10, 3.5.5 և

3.6.1 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

Կարգապահական գործը 06.05.2019թ. հանձնվել է Պալատի կարգապահական գործ նախապատրաստող անձ փաստաբան Ստեփան Ոսկանյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Խորհրդի նիստին ներկայացել է Դիմողի ներկայացուցիչ Սվետլանա Հովհաննիսյանը, ով Խորհրդին է ներկայացրել լիազորագիր:

Դիմողի ներկայացուցիչը վերահաստատել է Դիմողի դիմումում նշված դիրքորոշումը՝ հայտնելով, որ Դիմողը Գայանե Լյուդվիկյանի հետ ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքել 2014թ., իսկ դատական գործը, որի վերաբերյալ կնքվել է պայմանագիրը, ավարտվել է 3 կամ 4 տարի առաջ, ինչպես նաև հերքել է, թե Դիմողը ցանկություն է հայտնել, որպեսզի Պատասխանողը Դիմողի գործով դիմի վարչական դատարան: Դիմողը նշել է նաև, որ Պատասխանողի հետ եղբայրը կապ է պահպանել:

<u>3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

16.04.2019թ. Պալատ է մուտքագրվել Գայանե Լյուդվիկյանի բացատրությունը, որում հայտնվել է, որ իր և Դիմողի միջև 16.04.2019թ. կնքվել է իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, որի համաձայն՝ Գայանե Լյուդվիկյանի ծառայությունների դիմաց Դիմողը նրան պետք է վճարեր 1.200.000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ երկու փուլով՝ մինչև 2014թ. դեկտեմբեր ամիսը:

Դիմողը փաստաբանին 17.09.2014թ. վճարել է 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, իսկ 700.000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամը վճարել է 2015թ. մայիս ամսվա վերջում:

Գայանե Լյուդվիկյանը 17.09.2014թ.-ից մինչև 25.12.2014թ. դատական ներկայացուցչություն է իրականացրել թիվ ԵԿԴ/4060/02/14 գործով որպես պատասխանողի կարգավիճակում հանդես եկող Դիմողի ներկայացուցիչ, ներկայացրել է հայցադիմումի պատասխան և մասնակցել է դատական նիստերին:

Մինչև 2014թ. դեկտեմբեր ամիսը Դիմողը հայցադիմում ներկայացնելու համար կատարել է հարցումներ: Այդ ընթացքում ստացվել է ք. Երևան, Վարդանանց 5ա շենքի թիվ 354 բնակարանի կադաստրային գործը, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ից ստացվել են բնակարանի վերաբերյալ պահանջվող տեղեկանքը և այլ փաստաթղթեր, բացատրություններ են վերցվել նշված շենքի բնակիչներից և այլն:

Գայանե Լյուդվիկյանի կողմից 08.06.2015թ. հայցադիմում է ներկայացվել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան, իսկ հայցադիմումի օրինակը փաստաբանի կողմից էլեկտրոնային փոստով

ուղարկվել է Դիմողին: Նշված գործով դատարանի կողմից վճիռ է կայացվել 13.09.2016թ.:

Գայանե Լյուդվիկյանը պնդում է, որ հեռախոսով և էլեկտրոնային փոստով կապ է պահպանել Դիմողի հետ:

Այն բանից հետո, երբ դատարանը մերժել է հայցը, փաստաբանը հեռախոսազրույց է ունեցել Դիմողի հետ, նրան պարզաբանել է վճռում նշված դատարանի պատճառաբանությունները, բացատրել նաև, որ կարելի է փորձել դիմել ՀՀ վարչական դատարան, ինչին ի պատասխան՝ Դիմողը հայտնել է, որ ինքը բեռնափոխադրումներ իրականացնող վարորդ է, իրականացնում է երկարատև հեռավոր երթուղի, որն ավարտելուց հետո կգա ՀՀ, և կորոշեն հետագա քայլերը:

Որոշ ժամանակ անց փաստաբան Գայանե Լյուդվիկյանը փորձել է կապվել Դիմողի հետ, բայց չի ստացվել: 2017թ. ապրիլ ամսին Դիմողը զանգահարել է փաստաբանին և ասել, որ իր վերադարձը ձգձգվում է, և պայմանավորվել են, որ փաստաբանը Դիմողին ստորագրման համար կուղարկի նոր լիազորագիր, քանի որ նախորդ լիազորագրի ժամկետը լրացել էր, ինչը փաստաբանն արել է: Որոշ ժամանակ անց, Դիմողից նոր լիազարագիրը չստանալով, Գայանե Լյուդվիկյանը դարձյալ զանգահարել է Դիմողին, Դիմողը խոստացել է երթուղին ավարտելուց հետո լիազորագիրն ուղարկել, սակայն դա չի արել: Որոշ ժամանակ անց Դիմողը փաստաբանին հայտնել է, որ կգա Երևան և կհանդիպի իր հետ:

05.12.2018թ. Դիմողը քրոջ՝ Սվետլանա Հովհաննիսյանի հետ եկել է Գայանե Լյուդվիկյանի փաստաբանական գրասենյակ, ստորագրել է նոր լիազորագիր, որպեսզի Գայանե Լյուդվիկյանն իր անունից դիմի վարչական դատարան, սակայն 17.12.2018թ. դարձյալ քրոջ հետ եկել է Գայանե Լյուդվիկյանի գրասենյակ, հայտնել, որ չի ցանկանում դատարան դիմել և առաջարկել լուծել 16.09.2014թ. կնքված պայմանագիրը: Միաժամանակ կողմերի փոխադարձ համաձայնությամբ որոշվել է, որ փաստաբան Գայանե Լյուդվիկյանը Դիմողի քրոջ միջոցով փաստաբանական հոնորարի գումարից 400,000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամը վերադարձնելու է Դիմողին, ինչի մասին կազմվել է հանձնման-ընդունման ակտ:

Գայանե Լյուդվիկյանը չի ընդունում Դիմողի պնդումներն առ այն, որ ինքը փաստաբանի կողմից չի տեղեկացվել գործի ընթացքի և ելքի մասին, որ չի պատասխանել Դիմողի հեռախոսազանգերին, ինչպես նաև նշել է, որ Դիմողը չի իմացել իր տան հեռախոսահամարը, ուստի՝ չէր կարող խոսել իր դեռահաս դստեր հետ: ՀՀ վարչական դատարան դիմելու ձգձգումների պատճառը հանդիսացել է Դիմողի կողմից նոր լիազորագիր չուղարկելու հանգամանքը:

Գայանե Լյուդվիկյանը հերքում է նաև, որ գործի դրական լուծման երաշխիք է տվել Դիմողին՝ հղում անելով իրենց միջև կնքված պայմանագրի 5-րդ կետի վրա, որի համաձայն՝ գործի ելքի վերաբերյալ Գայանե Լյուդվիկյանի դատողությունները չեն կարող դիտվել որպես գործի բարեհաջող լուծման խոստում:

Գայանե Լյուդվիկյանը պնդում է, որ Դիմողի անունից դիմումը գրել և ստորագրել է այլ անձ, քանի որ Դիմողը 2019թ. հունվարից մեկնել է ՌԴ և ներկայում ՀՀ-ում չի գտնվում:

Խորհրդի նիստին Պատասխանողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է նիստի ժամանակի և վայրի մասին:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

Նախապատրաստողը 08.07.2019թ. կազմել է եզրակացություն:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 23.10.2017թ.:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 17.09.2019թ. ժամը 19:30-ին, Պալատի վարչական շենքի՝ ք. Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ թիվ 12 սենյակում:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ նաև՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, **հաստատված է համարում հետևյալ փաստերը.**

- 16.09.2014թ. կնքված իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի համաձայն՝ պատասխանող Գայանե Լյուդվիկյանը հանդիսացել է դիմող Հարություն Հովհաննիսյանի ներկայացուցիչը,
- Պատասխանող Գայանե Լյուդվիկյանը դիմող Հարություն Հովհաննիսյանի հետ կնքված պայմանագրի շրջանակներում 08.06.2015թ. հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան, որով դատարանի կողմից ի վնաս Դիմողի վճիռ է կայացվել 13.09.2016թ.:
- Դատարանի վճիռը պատասխանող Գայանե Լյուդվիկյանի կողմից չի բողոքարկվել:

Նշված հանգամանքները հաստատվում են կարգապահական գործի նյութերով, այդ թվում՝ Դիմողի դիմումով, Դիմողի ներկայացուցչի բացատրությամբ, Պատասխանողի բացատրությամբ, Դիմողի և Պատասխանողի միջև կնքված պայմանագրով, «Դատալեքս» տեղեկատվական համակարգից արված քաղվածքով:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի

համաձայն՝ Գայանե Լյուդվիկյանը փաստաբան է հանդիսանում 25.12.2012թ., և 2015-2019թթ. Գայանե Լյուդվիկյանի նկատմամբ առկա է մեկ ավարտված կարգապահական վարույթ՝ չհաշված սույն կարգապահական վարույթը:

Խորհրդի 21.12.2017թ. թիվ ԿԳ/135-Ա որոշմամբ Գայանե Լյուդվիկյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճվել է:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Գայանե Լյուդվիկյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Օրենքի 39.3 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթը կարող է հարուցվել կարգապահական պատասխանատվության հիմքը հայտնաբերելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան հիմքը ծագելուց մեկ տարի հետո: Սույն մասում նշված ժամկետներն անցնելուց հետո կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, իսկ խախտմամբ հարուցված վարույթը ենթակա է կարճման:*

Նույնական դրույթ է նախատեսված նաև Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 25-րդ հոդվածի 1-ին մասում:

Դիմողի դիմումի շրջանակներում պատասխանող փաստաբան Գայանե Լյուդվիկյանի կարգապահական պատասխանատվության հիմք կարող էր լինել իր ենթադրյալ ոչ բարեխիղճ վերաբերմունքը Դիմողի նկատմամբ և նրա շահերը ոչ պատշաճ պաշտպանելը, որպիսի վարքագիծը հանդիսանում է Օրենքի և Կանոնագրքի խախտում: Սակայն Դիմողի կողմից Պատասխանողին վերագրվող վարքագիծը տեղի է ունեցել 2014-2016թթ., այն է՝ Դիմողի և Պատասխանողի միջև ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքվել 16.09.2014թ., Պատասխանողի ենթադրյալ ոչ իրավաչափ վարքագծից և մատուցվող իրավաբանական ծառայությունների որակից Դիմողի դժգոհությունը և այդ առիթով Պատասխանողի հետ կոմունիկացումը սկսվել է նույն թվականից, իսկ պայմանագրով նախատեսված ծառայության շրջանակներում Պատասխանողի կողմից վարվող գործով ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից ի վնաս Դիմողի վճիռ է կայացվել 13.09.2016թ.: Այսինքն՝ սույն կարգապահական վարույթի առարկայի մեջ մտնող ողջ գործընթացը տեղի է ունեցել 3-ից 5 տարի առաջ: Մինչդեռ, ինչպես նշված է Օրենքի 39.3 հոդվածի 3-րդ մասում, կարգապահական վարույթ կարող է հարուցվել կարգապահական հիմքը ծագելուց, այն է՝ փաստաբանի ենթադրյալ իրավախախտ վարքագիծը թույլ տրվելուց ոչ ուշ քան 1 տարի անց: Այդ ժամկետն անցնելուց հետո փաստաբանը չի կարող ենթարկվել կարգապահական պատասխանատվության, և, համապատասխանաբար, հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Հետևաբար, Խորհուրդը գտնում է, որ Դիմողի կողմից մատնաշված հանգամանքները և Պատասխանողին վերագրվող վարքագիծը տեղի է ունեցել Օրենքի նշյալ դրույթով նախատեսված ժամկետն անցնելուց հետո, ուստի՝ այն չի կարող քննարկվել Խորհրդի կողմից, իսկ Պատասխանողի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 6-՝-րդ կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Պալատի նախագահի 02.05.2019թ. թիվ 164-Ա/ԿԳ-19077 որոշմամբ փաստաբան Գայանե Լյուդվիկյանի (արտոնագիր՝ թիվ 1582) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Սիմոն Բաբայան

17 սեպտեմբերի 2019թ.
թիվ թիվ ԿԳ/137-Ա
ք. Երևան